

Գր. Հակոբյան

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

Գրիգոր Նարեկացուց հետո Շնորհալին մեր ամենախոշոր բանաստեղծն է, որի չափածուի մեջ մեծ տեղ են զբաղում հատկապես շարականները: Շնորհալու բազմաթիվ բարձրարվեստ շարականներն ամենարժեքներն են համարվում մեր Շարակնոցում: Ի՞նչ գեղեցիկ, բազմատեսակ երգերով ու պոեմներով նա ճոխացրեց մեր հոգևոր երգը և հարստացրեց միջնադարյան պոեզիան:

Սխալ է, իհարկե, մեր բոլոր շարականները համարել միայն «Ս. դրքի համառոտությունն իմաստի ու խոսքի համեմատ»¹ ինչպես ասում է Գ. Խաչկոնցը: Ոչ բոլոր շարականների թեմաներն ու խոսքերն են, որ առնված են եղել Սուրբ Գրքից: Այդ շարականներից շատերն իրենց թեմատիկայով ու էությունով հայկական են:

Շնորհալին չի սահմանափակվել միայն հոգևոր երգերի շրջանակներում: Նա գրել է շարականներ, տաղեր, գանձեր, խրատական—մանկավարժական ոտանավորներ, պատմական պոեմներ՝ նկատի ունենալով ոչ միայն ժամավոր հավատացյալ հային, այլև ամբողջ հայ ժողովուրդը:

Հետևելով Գրիգոր Մազիստրոսին և Հովհաննես իմաստասեր Սարկավազ վարդապետին, Շնորհալին պատմական թեման օգտագործեց և մեր հոգևոր երգի մեջ: Շնորհալու շարականների մի մասն էլ կրում են դավանաբանական բնույթ՝ հատկապես քաղկեդոնականությունը դեմ պայքարելու համար: Պետք է ասել, որ սկսած 5-րդ դարից մինչև Շնորհալու ժամանակները, Դադիկոտնի որոշումների դեմ մղած պայքարի ընթացքում հայոց եկեղեցին իր ժամակարգությունով, ժեսերով ու տոնակատարություններով ավելի ինքնուրույն էր դառնում: Այս շրջանում շարականները բազմաթիվ ու մասնավոր էին ժամակարգության մեջ, որոնց հետ զարգանում էր նաև մեր հին հոգևոր երաժշտությունը:

5-րդ դարում մեր հոգևոր երգերը հիմնեցին ու զարգացրին Սահակը, Մեսրոպը և Մանգրակունին: Ապա 7-րդ դարում Կոմիտաս կաթողիկոսը նորոգեց ս. Հովհաննեսի տաճարը և այս առթիվ գրեց «Անձինք նուիրեալք» հուշակավոր պոեմ շարականը՝ այբուբենի կարգով և հայկական տաղաչափությամբ, մի շարական, որի արվեստից ու ոգուց հետագա բոլոր շարականագիրները շատ բան սովորեցին: Այնուհետև 8-րդ դարում, հոգևոր երգի ու այդ երգերի եղանակների, եկեղեցական երաժշտության գործում խոշոր դեր խաղաց Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցին: Նա մշակեց ու կարգավորեց եկեղեցու ութ ձայները, գրեց «Յարութեան աւագ օրհնութիւնները»: Այդ ժամանակ խոշոր նորություն էին նաև Սյունեցու շարականները, որոնց մեջ նա մացրեց ոգևորություն և մի տեսակ մարտական ոգի: Եթե

¹ Գ. Խաչկոնց, Հայոց կրոնական բանաստեղծություն, 1904, Թիֆլիս, էջ 25:

Անժխտելի է, որ մեր շատ շարականներում իշխող գաղափարը քրիստոնեականն է, և այլ կերպ էլ չէր կարող լինել: Այդպիսի շատ շարականներ ունի նաև հենց ինքը՝ Ներսես Շնորհալին, բայց ասել թե մեր բոլոր շարականները միայն ս. գրքի կրկնությունն են, աչքաթող անելով շարականների ազդեցին, պատմական և հայրենասիրական մոտիվները, կլինի միակողմանի և սխալ: Վիպական շարականների մի մասի, նյութը վերցված է հին կտակարանից, կամ ավետարանից: Սակայն, մենք ունենք նաև քնարական շատ գեղեցիկ շարականներ, որոնք դրսևորում են ոչ միայն հավատացյալի բարեպաշտական, կրոնական տրամադրությունները, այլև մարդկային անձնական հույզերն ու ապրումները, հայրենասիրական զգացմունք և այլն: Այս կարգի շարականների հեղինակների մեջ ավելի նշանավոր են Կոմիտաս կաթողիկոսը 7-րդ դարում, Ս. Սյունեցին՝ 8-րդ դարում, Սարկավագ վարդապետն ու հատկապես Շնորհալին 12-րդ դարում:

Ներսես Շնորհալու չափածոն ընդհանրապես աչքի է ընկնում իր թարմությամբ, թափով ու պատկերավորությամբ: Ինչ վերաբերում է նրա չափածոյի մի ստվար ու պատկանելի մասը կազմող շարականներին ու հոգևոր պոեմներին, դրանք ևս շատ բարձր են երևնոց արվեստով, ձևով ու բովանդակությամբ:

Շնորհալու հոգևոր երգերն էլ իրենց հետ բերեցին գեղեցկություն, տաղաչափություն, ձևի և էություն տեսակետից շատ նորություններ ու թարմություն: Այդ երգերն իրենց ուժեղ ազդեցությունը թողեցին Շնորհալուց հետո հանդես եկած հոգևոր և աշխարհիկ շատ բանաստեղծների, տաղերգուների վրա՝ հատկապես իրենց տաղաչափական ձևերով:

Շնորհալին շատ նորություններ բերեց նաև եղանակներ հորինելու և երաժշտության մեջ: Սամվել Անեցին նրան մեծ երգեցող է անվանում:

Շնորհալին և՛ գրել է, և՛ եղանակավորել և՛ երգել:

Շնորհալու ժամանակ, և դեռ նրանից էլ շատ առաջ հայկական վանական բարձրագույն դպրոցներում երաժշտությունը համարվում էր մեծ արվեստ, որը սերտ կապված էր հատկապես հոգևոր երգի ստեղծագործության՝ խոսքի հետ: Խոսք, եղանակ, երգ, երաժշտություն հասկացողությունները անքակտելի կապված էին իրար հետ և կազմում էին մի սքանչելի ներդաշնակություն մեր շարականների մեջ:

Մեր շարակնոցը երգի ու երաժշտության դասական մի հարուստ ժողովածու է:

Հետևելով իր նախորդներին, Ներսես Շնորհալին զարգացրեց ու հարստացրեց մեր հոգևոր երգը և նրա երաժշտությունը: Ներսես Լամբրոնացին Շնորհալուն ընծայված ներբողի մեջ ասում է.

«Անթիւ ևն բանք զոր նա խոսէր,

Դադցր ձայնիւք անջրպետէր...

Յօժարակամ կամօք երգէր

Որ երաժիշտ սուրբ հոգւոյն էր»¹:

Որքան բազմակողմանի է Շնորհալու հոգևոր երգերի նյութը, որքան բազմաժանր է նա, այնքան էլ բազմազան են նրա տաղաչափական ձևերն ու չափերը:

¹ «Թուղթ ընդհանր», 1865, էջմիածին, էջ 477 – 478:

Մինչև ներսևս Շնորհալին հոգևոր երգի մեջ կանոնավոր չափ և մասնավոր հանդ պոյություն չեն ունեցել: Արդարև, Շնորհալուց էլ շատ առաջ, մեր հոգևոր երգի մեջ նկատվում է ոտանավորի որոշ չափ, ուրիշ, բայց շատ թույլ ու հազվադեպ: Դեռևս 5-րդ դարում Հովհան Մանգակունու վերադրվող մի ողբական գրվածքի մեջ երևում է մեր հին հոգևոր ոտանավորի չափը¹:

Մովսես Խորենացին իր «Ուրարտայի սրբուհի» շարականը գրել է 14 վանկանի նույնպես չորս անգամյա չափով, որը շատ նման է Մանգակունու վերոհիշյալ ոտանավորի չափին:

Մինչև 10-րդ դարը մեր հոգևոր երգերը չնայած առանց հանդի են, բայց դրանց մեջ չափը, ուրիշ, տաղաչափության տարրերը նկատելի են, որոնք հետագայում զարգանում ու ընդհանրանում են Ն. Շնորհալու գործերի ազդեցությամբ: Սխալ է այն տեսակետը, որ իբր հայկական հոգևոր երգը իր տաղաչափական ձևերը ստանում է արաբական արշավանքներից հետո՝ արաբների բանաստեղծության և հատկապես տաղաչափության ազդեցությամբ: Ինչպես մեր հոգևոր երգի նյութն ու բովանդակությունը սկսվում ու զարգանում է 5-րդ դարից՝ կրոնական գույնով, բայց ազգային, ինքնուրույն հիմքով, այնպես էլ այդ հոգևոր երգերի ձևը, արվեստը՝ բովանդակության հետ միասնարար ու զուգընթաց աստիճանարար զարգանալով, ազգային ինքնուրույն երանգ ստանալով, իհարկև ոչ բոլորովին կտրված հարևան ազգերի բանաստեղծական արվեստի ազդեցություններից, հասել են մինչև Շնորհալուն և կատարելագործվել: 10-րդ դարից սկսած հանդն էլ է գործածվում մեր աշխարհիկ բանաստեղծության մեջ. բայց հոգևոր երգերը դեռևս այդ ժամանակ առանց հանդի էին, սակայն այդ չի նշանակում, թե այդ երգերը արձակ են եղել և չեն ունեցել չափածոյի տարրեր: Գրիգոր Նարեկացին էլ գրել է անհանդ ոտանավորներ, բայց իր «Ողբերգություն մատեանում» նա մի երկու տեղ գործածում է հանդը, ինչպես ինքն է ասում՝ նմանվելով ժողովրդական «լալեաց» բանաստեղծությանը: Նարեկացու հաղորդած այս տեղեկությունը և հանդի գործածությունը հաստատում են, որ մենք 10-րդ դարից առաջ, գուցե և շատ առաջ աշխարհիկ բանաստեղծության մեջ ունեցել ենք հանդը, որը չափածոյի էական հատկանիշներից մեկն է: Շատ հավանական է, որ հանդը մեր հոգևոր բանաստեղծության մեջ մտել է հայկական աշխարհիկ բանաստեղծությունից և ոչ թե եկել է գրաբի, օտարների ազդեցությամբ:

Ն. Շնորհալու պոետիկական կուլտուրայի մեծ արժանիքներից մեկն է այն է, որ օգտագործելով իր նախորդներից ստացած տակավին չզարգացած, անմշակ տաղաչափության տարրերը, մշակել ու առաջ է մղել՝ հասցնելով այն զարգացման ամենարարձր, օրինակելի աստիճանի:

Պրոֆ. Մ. Արեղյանը Շնորհալու տաղաչափության մասին խոսելիս այսպես է գնահատում այն.

«Սի քանի չափական ձևեր նա այնպես զարգացրել է ու ուրիշի դարձրել, որ օրինակելի են մնացել և մեր հին գրականությունից նույնիսկ նորին են անցել»²:

¹ Հովհան Մանգակունի, 364:

² Մ. Արեղյան, հատ. Բ, էջ 82:

Շարականների մեջ Շնորհալին գործածել է տաղաչափական զանազան ձևեր, տարրեր չափերով, որոնք խիստ երաժշտական են:

Շարականների մեջ Շնորհալու ավելի սիրած ձևն է՝ յամբական 8 վանկանի երկանդամ ոտանավորը՝ կազմված երկու յամբական բարդ ոտքերից: Ջոժոռանք ասել, որ այս չափը առաջին անգամ գործածել է 'Իրիգոր Նարեկացին, իհարկե առանց հանգի: Չափի նմանությունը և Նարեկացու ազդեցությունը ցույց տալու համար բերենք մեկական օրինակ Նարեկացուց և Շնորհալուց. Նարեկացու Ծննդյան տաղից՝

Ծաղիկ ծոցոյ/ծոց հայրենի
ամպոյ նման/իջեալ յերկնից...
Սէր ի յամպոյ/ամպ սիրաշարժ,
Օղոյն ցողեալ/ի նոյն գեղման¹:

Շնորհալու «Նորաստեղծեալ» բանաստեղծութուն երգից.

Սերդ սիրով/իռնարհեցար,
Ի փրկութիւն/մեր մարմնացար.
Նովին մարմնովն/խաչեցար,
Ի գերեզման/մահու եղար...²

Ներսես Շնորհալին մշակելով ոտանավորի այս տեսակը, ավելի զարգացնելով ու երաժշտական դարձնելով այն, գործածել է նաև հանգը, որով և նրա այս չափի շարականները աչքի են ընկնում իրենց գեղեցկութամբ ու երաժշտականութեամբ:

Շնորհալու լավագույն բոլոր երգերն ու պոեմները գրված են այս ձևի ոտանավորով: Հիշենք դրանցից «Նորաստեղծեալ», «Նախկապ սիրով», «Նորոգող տիեզերաց» ակրոստիկոս երգերը և «Այսօր անճառ», «Նորարչական», «Աստուած անեղ» ավերեանական կարգով գրված գեղեցիկ պոեմները:

«Նորաստեղծեալ» երգից օրինակը վերևում բերվեց, բերենք մեկական տուն «Նախկապ սիրով» և «Նորոգող տիեզերաց» երգերից.

«Նախկապ սիրով/հայրդ գթած.
Ի քո ստեղծեալ/գործս ձեռաց.
և զբանակս/հրեշտակաց.
Տուր ահապան/մեզ տկարացս...»³

«Նորոգող»-ից վերջին տունը.

Սիրտ իմ առ քեզ/աղաղակէ,
Բան որ ընդ հօր/ի սկզբանէ,
Որ կամաւոր/վասն մարդկան,
Կրեցեր մարմնով/զայս ամենայն...⁴

¹ Գր. Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 464:

² «Շարական», 469:

³ «Շարական», 476:

⁴ «Շարական», 223:

Մեկական օրինակ էլ բերենք պոեմներից:

«Այսօր անճառ» — պոեմից.

Լոյսըն խօսէր/աղերսալի՜
 Խաւարելսն/վասն դարձի.
 մի ոմն ի ձէնջ/ասէ եղբարք,
 զիս մասնելոց/է առ ի մահ¹:

«Արարչականից»

Ժառանգին/հօր սպասաւոր,
 և արգանդէ/երկրպագող.
 Կարապետ/և Մկրտիչ.
 Այնմ որ մեղաց/մերոց քաւիչ...²

«Աստուած անեղ» պոեմից.

Ուրախութեամբ/զօրք երկնայինք՝
 Յերկնից չերկիր/իջանէին.
 Յորժամ յարեար/ի մեռելոց
 Լոյս ծագեցաւ/արարածոց...³

Վերևում հիշված երեք երգերն էլ անվանակապով գրված ոտանավորներ են, իսկ 3 պոեմներն էլ գրված են այբբենական կարգով: Պետք է ասել, որ ակրոստիկոսի և այբուբենի կարգով գրելը իր ժամանակին միայն ձևական երևույթ չի եղել, այլ արվեստ, գրական կուլտուրա: Այս ձևերը Շնորհալին վերցրել է Գոմիտաս կաթողիկոսից, Գրիգոր Նարեկացուց և կիրառել իր շատ երգերում ու պոեմներում:

«Որդոցն որոտման» ներքող-շարականը Շնորհալին գրել է լամբական եռանգամ 13 վանկանի չափով.

«Որդիք որոտման/որք ի վերուստ/որոտացին,
 Յամպոյ հրեղինաց /հողմով հոգւոյն/ իջեալ աշխարհս»:

Ոտանավորի այս չափն էլ Շնորհալին վերցրել է Գրիգոր Նարեկացուց, որը գործածել է «Դառաանիցն»⁴ և մի քանի այլ տաղերում:

Շնորհալին գրել է և անապետական եռոտնյա 9 վանկանի շարականներ ու տաղեր: Այս չափը նույնպես Շնորհալուց առաջ գործածել է Նարեկացին՝ խառն ոտանավորի մեջ. ինչպես օրինակ՝ Հարության տաղը, որը մեր ամենահին բարդոտնյա խառն ոտանավորն է.

Ահա այդ խառն ոտանավորից մի քանի տող.

Ոայլն այն իջանէր /ի լեռնէն/ ի Մասեաց.
 Եւ ի վերա նորա /աթոռք են/ կարգեալ...
 Եւ սամիքն էին արծաթի/ լուծն էր ոսկի.

Եւ սամոտիքն ապրիշիմի...

Այն ճորտն ճոճ/ էր և ճապուկ,

Ուռամիջակ/ հաստարագուկ...⁵

¹ «Շարական», 220:

² «Շարական», 471:

³ «Շարական» 854:

⁴ Գր. Նարեկացի, Մատենադրութիւնք, էջ 409:

⁵ Նույն տեղում, էջ 473—474:

Ի՛ միջի ալլոց ասենք, որ այս տաղի մեջ երևում են նաև հանգի նմուշներ, որի մասին մինչև օրս խոսք չի եղել:

Օրինակ 7-րդ տողը վերջանում է «սերովրեք» բառով,

իսկ 8-րդ » » «քերովրեք»

40-րդ տողը վերջանում է «սալլին» բառով,

41-րդ » » «ամոլին»

29-րդ » » «ճապուկ»

30-րդ » » «հաստաբազուկ» բառով¹ և այլն:

Յամբական երկանդամ ութ վանկանի ոտանավորից հետո Շնորհալու շատ սիրած ձևերից մեկն էլ յամբ-անապեստյան միանդամ հինգ վանկանի ոտանավորն է: Այս չափով են գրված նրա «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը:

Օրինակ՝ Առաւօտ լուսոյ,

Արեգակն արդար.

Առ իս լոյս ծագեա՜:

Ահա մի օրինակ էլ «Աշխարհ ամենայն» երգից:

Աշխարհ ամենայն,

Առ իս նայեցեալ,

Ախտակից լերուք²:

Շնորհալու այս երկու գեղեցիկ երգերը գրված են սահուն, երաժշտական ու պարզ լեզվով: Դրանք աչքի են ընկնում ամբողջ գործի ընթացքում՝ տողերի սկզբում գրված հնչյունների հանգիտությամբ: Ինչպես երևում է վերևում բերված օրինակներից, երգերի ամեն մի տունը կազմված է երեք կարճ տողերից, որոնք սկսվում են նույն հնչյուններով՝ ըստ այբուբենի կարգի:

Շնորհալին ոչ միայն այս երկու երգերում, այլև մյուս շատ չափածո գործերում հատուկ ուշադրություն է դարձնում հանգիտության վրա, որ հանգի դործածության հետ միասին նրա պոետիկական կուլտուրայի ամենաարժեքավոր նորությունն է միջնադարյան հայ պոեզիայում: Հայտնի է, որ բաղաձայնների գեղեցիկ ձևեր կան Նարեկացու Ողբերգության մատյանում և հատկապես «Հարություն» ու «Ծննդյան» տաղերում, բայց այդ ձևերը Շնորհալու մոտ ավելի կոկիկ ու սահուն են, ախորժալուր ու երաժշտական:

Բաղաձայնների հանգիտությունը միայն ձևական պրիոմ չէ: Ոտանավորի ու թմբ ուժեղանում է հնչյունների դաշնակով, որը առաջանում է նման հնչյունների կրկնությամբ, ինչպես՝

Ճառագայթ փառաց,

Ճանապարհ ինձ ցոյց.

Ճեպել ի յերկինս⁴:

կամ

¹ Գր. Նարեկացի, Մատենադրութիւնք, էջ 473—474:

² «Ժամագիրք», 7,

³ Նույն տեղում, 6:

⁴ «Ժամագիրք», 8:

Մովն ի միջի իմ ծածանէր
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր:

Ինչպէս հիշվեց բաղաձայնովժը վարպետորեն գործածել է Շնորհալուս
առաջ Դրիգոր Նարեկացին, «Ծ» և «Վ» բաղաձայններով՝

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ
ծավալանայր առաւօտուն...
Ի վեր, ի վերայ վարսիցն,
Մաւալէր ծաղիկ ծովալին.
Մաղիկ ծոցոյ ծոց հայրենի¹ և ալլն:

Բաղաձայնովժի գործածութիւնը շատ տարածված է եղել մեր հին
գրականութեան մեջ՝ հատկապէս Նարեկացու և Շնորհալու գործերում, որոնք
անցնելով երկար ճանապարհ, ապրում են նաև մեր նոր գրականութեան մեջ:
Այս ձևը սիրել ևն նաև մեր նոր քնարերգութեան ականավոր կլասիկները՝
Թումանյանը, Իսահակյանը, Տերչանը և ուրիշներ: Թումանյանի «Ախթամար»
պոեմն սկսվում է հենց այդ Օ բաղաձայնովժով.

Միծաղախիտ Վանա ծովի...
Մովն էր մտնում գաղտագողի
Մովն էր մտնում առանց նավակ... և ալլն:

«Ծ» և «Շ» բաղաձայնովժները ամենասիրելի և ամենագործածական
ձևերն են Նարեկացու և Շնորհալու ոտանավորներում: Նարեկացու վարդա-
վառի տաղում այդ Շ բաղաձայնը ամենից շատ է գործածված ու աչքի
ընկնում իր ախորժալուր հնչմամբ:

Շուշանն շողէր յովախն
Շողշողէր դէմ արեգականն...
Շուշանն շաղով լցեալ
Շող շաղով և շար մարդարտով...²

Շնորհալու մոտ՝ Շուրջ պատեալ զիմն,
Շունք բաղում եղեն.
Շաղախին արեամբ...³ և ալլն:

Նկատենք նաև, որ բաղաձայնովժը Նարեկացու և Շնորհալու ոտանա-
վորների միայն բառերի սկզբում չէ որ գործադրվել է, այլ այդ նկատվում է
թե բառի մեջտեղում, և թե վերջում.

Նարեկացու մոտ՝ Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսից արփենից...
Հով հարեալ գոհար շուշանին...
Որոյ սիւն ի սրտին նուսիայօրէն
Կարկաչէր սաթրերունի սէր⁴:

¹ Գր. Նարեկացի. Մատենադրութիւնը, էջ 464, 465, 482:

² Շունյն տեղում, 482:

³ «Ժամագիրք», 71

⁴ Գր. Նարեկացի, Մատենադրութիւնը, էջ 482:

Սլստեղ հատկապես «Բ», «Ռ», «Հ», «Ս» բաղաձայնները գործածված են ոչ սլսյն բառի սկզբում, այլ ամբողջ բառում:

Բաղաձայնությունի գործածությունը բառերի սկզբում և մեջտեղում Շնորհալու մոտ

Թաթաւին տղմով...

Թոթաիիլ չկարեմ

Չարաչար վշտօք

Չարչարի անձն իմ...¹ և այլն:

Բաղաձայնություններից հետո Շնորհալու շարականներում աչքի է ընկնում հանգիստության մի ուրիշ տեսակը ևս՝ ութմական առձայնությունը, որի մի տեսակը կարելի է համարել կարճ տողերի սկզբում նույն ձայնավորների կրկնությունը, որը նկատվում է դարձյալ «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերում. օրինակ՝

Առաւօտ լուսոյ,

Արեգակն արդար,

Առ իս լոյս ծագեա՞:

Հանգիստության բուն էությունը հանդիսանում է հանգը, որը միջնադարյան հայ պոեզիայի մեջ կանոնավոր կերպով գործադրողը եղել է Ներսես Շնորհալին: Չնայած Շնորհալուց առաջ Դրիգոր Մագիստրոսը իր «Հազարատողեանը» գրել է հանգով, բայց դա եղել է նույնահանգ, ձանձրալի և անարվեստ, դրա համար էլ չի ընդհանրացվել և տարածվել: Սկզբնական շրջանում Ն. Շնորհալին հետևել է Դրիգոր Մագիստրոսին և իր մի քանի բանաստեղծությունները³ գրել է նույնահանգ:

Սակայն նա շուտ է զգացել, որ նույնահանգ, երկար չափածոն անհետաքրքիր է ու ձանձրալի. դրա համար էլ «Բան հաւառոյ» պոեմի հիշատակարանի մեջ բացատրում է, որ ձանձրույթ չպատճառելու համար գրվածքի հանգերը փոփոխել է, գրում է տարբեր հանգերով:

«Ոչ մի տառիւ վերջ յանգական,

Ձի մի ծուլից լուր ծանրանան.

Այլ խտրաբար փոփոխական,

Ձի ընթերցողք ոչ ձանձրանան»:

Եվ իսկապես, իր այս հայացքը ոտանավորի տաղաչափության վերաբերյալ գործնականում նա իրագործում է: Շարականների մեջ նույնահանգ ամբողջ գործեր շատ քիչ են: Ծայրահեղ դեպքում ամբողջ գործի մեջ միայն մեկ տունն է նույնահանգ, որի տողերի թիվը վեցից հազվագյուտ դեպքում է ավելի լինում: Շնորհալու նշանավոր «Նորաստեղծեալ երգի առաջին տունը, որը բաղկացած է 6 տողից և 2 տող էլ կրկնակն է, ունի երկու հանգ՝ «ից», «ոց» և մի առձայնություն՝ «ի»⁵:

¹ «Փամաղիրք», էջ 7:

² Նույն տեղում:

³ Ողբերգություն վիպասանական, «Յաղաղ» երկնից և զարդոց նոցա».

⁴ «Բանի չափաւ», 223:

⁵ «Շարական», 469:

Այս երգի երկրորդ տունն էլ գրված է «թիւն» «—ական» և «ին»— հանգերով՝ չհաշված կրկնակը: Այսպես տարրեր հանգերով է գրված այս ամբողջ երգը:

Հետևաբար՝ 6—8 տող ունեցող տները՝ կրկնակների հետ, ունեն 3—4 հանգ, այսինքն՝ երկու տողն ունի մի հանգ: Այսպիսի փոփոխական, տարրեր հանգերով են գրված Շնորհալու նշանավոր շարականների մեծ մասը:

Շնորհալու՝ հատկապես յամբական երկանդամ 8 վանկանի բոլոր երգերն ու պոեմները գրված են տարրեր հանգերով, ամեն երկու տողին տալով մի հանգ՝ հազվադեպ խախտումներով, երբ 8 տողանոց տան մեջ չորս տողը վերջանում է նույն հանգով:

Շնորհալին ունի մի ուրիշ, գրեթե անհանգ գրված, նույնպես յամբական երկանդամ ութ վանկանի ոտանավոր, որը շարականների մեջ ամենաներաժշտական, սահուն ու գեղեցիկ գործերից է:

Շնորհալին այնքան է ժողովրդականացել ու սիրվել իր գեղեցիկ շարականների, տաղերի ու դրանց պարզ լեզվի համար, որ ժողովուրդը նրան դարձրել է անդերադանց հեղինակ, մեծարանքի առարկա և հանելուկների նյութ: Ահա այդպիսի մի բնորոշ քառյակ-հանելուկ ժողովրդական լեզվով.

Իշխան մի կայր յկեղեցի,
Ի ծայրագոյն աստիճանի.
Ի՞նչ զոր չեղև ոք աւելի
Երգիչ տաղի շարականի¹:

Պետք է ասել, որ ինչքան միատեսակ ու միապաղաղ են շատ շարականներ՝ նյութի ու բովանդակության նմանութան պատճառով, այնքան ավելի բազմատեսակ են այդ շարականների մեջ գործածված ոտանավորի չափերը և ձևերը:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ Շնորհալին հոգևոր երգի մեջ ոչ միայն հանգն է մտցրել, այլև գրել է բազմադան չափերով ու ձևերով տաղեր, շարականներ, որոնցից մի քանիսի վրա միայն կանգ առանք: Նրա գործածած բազմաթիվ չափերից յամբ-անապեստյան հինգ վանկանի և յամբական 8 վանկանի երկանդամ ոտանավորները անչափ մոտիկ են աշխարհիկ բանաստեղծության չափին: Շնորհալին շատ ուշադիր է եղել դեպի այդ չափերը և պահանջել է ընթերցողից, իր գործն այնպես կարդա, որ ոտանավորի չափը չխախտվի, նախ՝ որովհետև շատ դժվար է եղել նրա համար գրել նոր չափով:

«...Վասն այսորիկ տաժանեցայ»

Գրել չափով բզրանս ի սմա...² և երկրորդ՝ որ գրվածքի նոր ձևը լեզվին տալիս է բազմատեսակ, հետաքրքիր բնույթ՝ նոր չափերով:

Վասն այսորիկ տալ նա լեզվի
Գոթնասեռեան ազգս բանի:

¹ Զարրիանույան. Հին գպր. պատմութիւն, Վենետիկ, 1897., էջ 638:

² «Բանք չափաւ», էջ 162:

Ըստ այսմ և ևս նկարեցի,
Չնորտաղական բանս ի քարտի¹:

Շնորհալին այսպիսի նոր ձևերով հորինել է տաղեր և շարականներ, որի համար հետամնաց ու տգետ վանականները «անփակ բերանով» նրան պարսավել են ու անարգել չափածոյի մեջ մտցրած այդ նորությունների և ժողովրդական ոճի համար:

12-րդ դարում Շնորհալին ոչ միայն աշխարհիկ և ազգային բնույթի թեմաները դարձնում է շարականների բովանդակություն, այլև նա աշխատում է դրանց ձևն էլ առաջ շարժել: Նա կարողանում է այդ ձևի մեջ էլ մտցնել նորություններ՝ այն է՝ լեզվի ու ոճի պարզություն, ոտանավորի ձևով ու չափով աշխարհիկ գրականությունը նմանվելու փորձեր, մի խոսքով՝ նա պատռում է ժամանակի չափածոյի սահմանափակ, լճացած ձևերը, առաջ մղում, մշակում և հարմարեցնում ժամանակի ոգուն: Հայրենասիրական, աշխարհիկ թեմաները արդեն թափանցել էին նույնիսկ հոգևոր բանաստեղծության բովանդակության մեջ՝ հանձինս Սարկավազ վարդապետի և Շնորհալու: Հնարավոր էր փոփոխություններ նաև այդ հոգևոր բանաստեղծության ձևի մեջ: Եվ ահա, շարականների մեջ այդ փոփոխություններն ու տաղաչափական նորությունները կատարողը հանդիսացավ դարձյալ ինքը՝ ժամանակի առաջադեմ, հայրենասեր մեծ բանաստեղծը՝ Ներսես Շնորհալին: Շնորհալու բանաստեղծական կուլտուրայի մասին խոսելիս, չի կարելի աչքաթող անել նաև նրա հարուստ, պարզ ու գեղեցիկ լեզուն:

12-րդ դարի սկզբից թե՛ գրականության և՛ թե՛ հոգևոր կրթի մեջ մուտք են գործում ժամանակի խոսակցական լեզուն և բերանացի աշխարհիկ գրականության թեմաները: Մենք տեսանք, Շնորհալու կողմից մշակված մի քանի ոտանավորների չափեր, թե՛ դրանք որքան մոտ են ժողովրդական կրթության իրենց տաղաչափությանը ու լեզվով: Ժիշտ է, Շնորհալին եղել է բարձրաստիճան հոգևորական, հալ եկեղեցու ականավոր պաշտոնական զաղափարախոս, կրթվել ու դաստիարակվել է ժամանակի նշանավոր վանքերում քրիստոնեական աշխարհայացքով, բայց նա ոչ միայն հեռու կանգնած չի եղել ժողովրդական երգերից ու լեզվից, այլև շատ դեպքերում աշխատել է նմանվել աշխարհիկ բանաստեղծության ոգուն, ոճին ու լեզվին: Այդ ևս հաստատում նրա հանելուկ-առակները, մանուկների համար գրված նրա մանկավարժական-խրատական գործերը, շարականներից՝ «Յիշեսցուք ի գիշերի», «Ջարթիք փառք իմ», «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը, որոնք գրված են պարզ, պատկերավոր ու սահուն լեզվով:

Համարձակ կարելի է ասել, որ Շնորհալու բոլոր շարականները գրված են մաքուր հայկաբանությունով, պարզ ու սահուն լեզվով: Շնորհալին գտնում է, որ բանաստեղծը գրում է մարդկանց համար՝ լինի դա արձակ, թե՛ չափածո՝ միևնույնն է, միայն պետք է լինի պարզ, գեղեցիկ, հասկանալի: Նա գտնում է, որ կան մարդիկ, որոնք արձակ գրելու ձիրք ունեն, մարդիկ էլ կան՝ չափածո: Վերջինս խոսքն ավելի գեղեցիկ ու վայելուչ է դարձնում: Ահա թե Շնորհալին դրա վերաբերյալ իր «Յիսուս որդի» պոեմի հիշատակարանում ինչ է գրում.

«Ըստ այսմ և շնորհն ոչ միակի
Ս ի բազումս բաժանի...»

¹ «Բանք չափաւ», էջ 163:

...Ումանց տա բան, որ ոչ չափի
 Բայց զօրաւոր և ըստ կարգի.
 Այլոց շնորհէ բանս տաղի...
 Վասն այսօրիկ տա նա լեզուի
 Զյոզնասեռեան ազգս բանի¹:

Ուրեմն՝ ինչպես էլ գրի մարդ, պարզ թե խրթին, արձակ թե չափածո, ըստ Շնորհալու՝ դրանք բոլորն էլ ունեն մի նպատակ՝ սովորեցնել մարդկանց: Բայց որպեսզի ընթերցողը չձանձրանա, պետք է գրել բաղմատեսակ, լեզվի տարրեր ձևերով: Մենք տեսանք, որ Շնորհալին նման հայացք ունի նաև տաղաչափության վերաբերյալ, որպեսզի ընթերցողը նույնահանգ ոտանավորից չձանձրանա, չծուլանա, պետք է գրել բաղմահանգ, տարրեր հանգերով: Զնայած Շնորհալին այն կարծիքին է, որ մեկիմ ոմի կողքին անհրաժեշտ է նաև ծածուկ, խրթին ոմը, մարդկանց մաքերը լարելու, զարգացնելու համար, բայց և այնպես գործնականում նա այդ խրթին ոճը չի կիրառել ոչ արձակ, ոչ չափածո, ոչ աշխարհիկ և ոչ էլ հոգևոր երգեր գործերում, բացի «Հրեշտակապետաց» և «Ի սուրբ քառասունն» գրած երկու տաղից, որոնք գրել է Դիոնեսիոս Արիսպագացու նմանությունամբ և ազդեցությունամբ:

Նարեկացին «Ոգրերգության Մատյանի» պերճ, հարուստ ու ճկուն լեզվով, տաղերի պարզ ու պատկերավոր ոճով ճանապարհ հարթեց Շնորհալու կոկիկ, սահուն, զեղեցիկ ու դյուրըմբռնելի լեզվի համար: Սարկավազը իր Սարեկի երգով ու Ղևոնդեանց շարականներով հող պատրաստեց Շնորհալու համար՝ դուրս գալու եկեղեցական բանաստեղծության նեղ, սահմանափակ թեմատիկայից ու դրա հետ պայմանավորված միապաղաղ ոճի սահմաններից և ըստեղծելու ինքնուրույն, պարզ ու հարուստ, նոր թեմաներին համապատասխան, կենսունակ լեզու: Շնորհալին Վարդանանց, Ղևոնդյանց, Ս. Սարգսի, Ս. Դեորգի, Տրդատի, Դրիգոր Լուսավորչի ու Ներսես Մեծի թեմաներով, տաղաչափությամբ ու լեզվով, նոր թափ ու թարմություն, հայրենասիրական մոտիվներ մտցրեց մեր շարականների մեջ: Բնական է, որ այդ խոշոր նորամուծությունները պահանջում էին գեղարվեստական արտահայտչական նոր միջոցներ ու ձևեր, նոր ոճ ու լեզու:

Շնորհալին մեր այն քանաստեղծն է, որ իր ստեղծագործությամբ պարզ ու մատչելի լեզվով մի տեսակ կամուրջ հանդիսացավ գրաբարի և միջին հայերենի միջև:

¹ «Բանք չափա», էջ 164—165: